«ՆԱՐԻԵՆԱ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

2022-07-06

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/328 Ա

06.07.2022

«ՆԱՐԻԵՆԱ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների
փոփոխություններին համաձայնություն տալու մասին

Ուսումնասիրելով «ՆԱՐԻԵՆԱ» ՍՊԸ (այսուհետև՝ նաև գրավատուն) կողմից 2022 թվականի հունիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմաններում առաջարկվող փոփոխությունները և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է¹» կետը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Համաձայնություն տալ «ՆԱՐԻԵՆԱ» ՍՊԸ գրավատան կողմից 2022 թվականի հունիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ